ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի

2014 թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16)»

Պատվիրատուն՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք հասցեում, ստորև ներկայացնում է «ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16)» ծածկագրով հայտարարված ՇՀ ընթացակարգի հրավերի փոփոխության պատճառը և փոփոխության համառոտ նկարագրությունը:

Փոփոխության պատճառ՝	**Հայտերի գնահատում նաև ներկայացված տեխնիկական առաջարկներով:**
Փոփոխության նկարագրություն՝	**Ֆինանսական չափորոշիչին կից անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական առաջարկ, որը պարտադիր է, եթե այն տարբերվում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից: Տեխնիկական առաջարկը ներկայացվում է կամայական ձևաչափով:**
Փոփոխության հիմնավորում՝	**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:**

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն.Իսահակյան:

Հեռախոս՝ 51 91-83:

Էլ. փոստ՝ gnumner.mnp@yandex.ru:

Պատվիրատու՝ ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
Р У К О В О Д И Т Е Л Ь А П П А Р А Т А

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
էլ.փոստ /E-mail/ эл.почта: e.pirumyan@mnp.am
Web page: www.mnp.am
☏ (374 10) 58 54 19
(374 10) 54 08 57

№_____

«____» «_____» 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին ըստ ցանկի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16)»:

Ֆինանսական չափորոշիչին կից անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական առաջարկ, որը պարտադիր է, եթե այն տարբերվում է հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից: Տեխնիկական առաջարկը ներկայացվում է կամայական ձևաչափով:

Հայտնում եմ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2014 թվականի օգոստոսի 6-ը, ժամը 11:00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Ն.Իսահակյանը:

Հայտերը կբացվեն 2014 թվականի օգոստոսի 6-ին, ժամը 11:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերումը:

ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի (որոնք կազմված են՝ 8 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են՝ իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N2), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված N3): Հավելվածում գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, իսկ www.armeps.am կայքում գնային առաջարկի համապատասխան դաշտում լրացվում է գինը առանց ԱԱՀ:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

ՀՀ բնապահպանության նախարարության էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumner.mnp@yandex.ru:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի
5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 10 թերթ:

Հարգանքով՝

Է. Փիրումյան

Գնումների գործընթացի իրականացման բաժին
51 91 83

Հավելված № 1

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման № ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) ծածկագրով գնման ընթացակարգի

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Համառոտ բնութագիրը
1	2	3	4	5
1.	դյուրակիր համակարգիչներ	հատ	1	Դյուրակիր համակարգիչ (Notebook) պրոցեսորը Intel Core i3 կամ համարժեքը, էկրանը՝ LED, անկյունագիծը ոչ պակաս 17 դյույմ, օպերատիվ հիշողությունը՝ ոչ պակաս 4GB RAM, հիշողությունը՝ HDD ոչ պակաս 500GB, վիդեոքարտը ոչ պակաս 1GB, վեբ-տեսախցիկ, DVD/±RW, 802.11b/g/n, պայուսակ
2.	տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 28 էջ/րոպե արագության	հատ	5	Քանոն ՄՖ-3010 կամ համարժեքը: Լազերային, տպման արագությունը՝ ոչ պակաս 18 էջ/րոպե, ոչ պակաս 1200x600 dpi, հիշողությունը ոչ պակաս 64mb, թղթի ձևաչափը՝ A4:
3.	սեղանի համակարգիչներ	հատ	60	Պրոցեսորը՝ Intel Pentium G2020 2,9GHz Soccet 1155 կամ համարժեքը, մայրական սալիկը՝ 2 PCI բնիկով, RAID 1, օպերատիվ հիշողությունը՝ RAM 4GB, DDR3 Kingston HiperX կամ համարժեքը, հիշողությունը՝ HDD 500GB SATA3 64MB, DVD-RW, սնուցման բլոկը ոչ պակաս 600W, ստեղնաշար, մկնիկ
4.	սեղանի համակարգիչներ	հատ	1	Պրոցեսորը՝ Intel Core I5-4430 կամ համարժեքը, մայրական սալիկը Gigabyte GA-H87-HD3 կամ համարժեքը, օպերատիվ հիշողությունը Kingston կամ համարժեքը DDR3 ոչ պակաս 8Gb, հիշողությունը՝ HDD 1TB, վիդեոքարտը՝ Nvidea GeForce GT 220 կամ համարժեքը ոչ պակաս 128bit 1GB, սնուցման բլոկը՝ ոչ պակաս 600W, ստեղնաշար, մկնիկ
5.	անխափան սնուցման աղբյուրներ	հատ	61	Ոչ պակաս 600 ՎգԱ հզորությամբ, միաֆազ
6.	գունավոր տեսամոնիտորներ	հատ	60	Անկյունագիծը ոչ պակաս 18.5 դյույմ, կետերի քանակը՝ մինչև 1366x769, ֆորմատը՝ 16:9, կոնտրաստը՝ ոչ պակաս 10000:1, հատիկավորությունը՝ 0.25-0.30մմ, արձագանքման ժամանակը մինչև 5 մվ, վիդեո մուտք՝ VGA:
7.	տեսավահանակ, հեղուկ բյուրեղային LCD, 22"	հատ	1	Կետերի քանակը՝ մինչև 1920x1080, ֆորմատը՝ 16:9, պայծառությունը (քդ/մ2)՝ 300, Կոնտրաստը՝ 10000:1, հատիկավորությունը (մմ)՝ 0.25-0.30մմ, արձագանքման ժամանակը մինչև 5 մվ, վիդեո մուտք՝ VGA, HDMI:
8.	լազերային տպիչներ	հատ	15	Քանոն LBP-6020 կամ համարժեքը: Լազերային, տպման արագությունը՝ ոչ պակաս 18 էջ/րոպե, ոչ պակաս 1200x600 dpi, հիշողությունը ոչ պակաս 8mb, թղթի ձևաչափը՝ A4:

* Մատակարարման վայրը՝ 0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ շենք

Հավելված 2
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

_____ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
_____ -ի կողմից N ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) ծածկագրով
Պատվիրատուի անվանումը
հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
_____ :
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» _____ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

Չափաբաժին-ների համարները	**Գնման առարկայի անվանումը**	**Արժեք**	**ԱԱՀ-ն***	**Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը (տառերով և թվերով)**
1	**2**	**3**	**4**	**5=3+4**
1	«Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N1»			
2	«Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N2»			
…	…			
…	…			

- *3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
- *Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» _____ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 4
Նախագիծ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16)

ք. Երևան «_____» «_____» 2014թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Է.Փիրումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «_____» _____-ն, ի դեմս _____ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **ապրանքը** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1. Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2. Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5. Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2. Գնորդը պարտավոր է՝

3.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ

պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3. Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4. Վաճառողը պարտավոր է՝

3.4.1. Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7. Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8. Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝ **_____ (_____) ՀՀ դրամ**՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2. Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետը է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

5.3. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3. Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4. Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով չափով:

7.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 25-ը:

9.2. Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

9.3. Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջոդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ վճարման ժամանակացույցի մասով կողմերի միջև կնքվում է պայմանագրի լրացում:

9.4. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.5. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ. Գնորդը համաձայնեցման է ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարություն փոփոխության մեխանիզմը, որը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կողմերի միջև կարող է կնքվել պայմանագրում փոփոխություն կատարելու համաձայնագիր:

Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքած համաձայնագրում, չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.6. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.7. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.8. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.9. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.10. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	***ՎԱՃԱՌՈՂ***
ՀՀ բնապահպանության նախարարություն	_____
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	_____
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	_____
ՀՀ 900013007019	ՀՀ _____
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ _____
ՀՀ բնապահպանության նախարարության	_____
աշխատակազմի ղեկավար	_____
Է.Փիրումյան	_____
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված № 1
«_____» «_____» 2014թ. կնքված
№ ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) պայմանագրի

ԳՆՈՐԴ	***ՎԱՃԱՌՈՂ***
ՀՀ բնապահպանության նախարարություն	_____
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	_____
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	_____
ՀՀ 900013007019	ՀՀ _____
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ _____
ՀՀ բնապահպանության նախարարության	_____
աշխատակազմի ղեկավար	_____
Է.Փիրումյան	_____
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	**Ապրանքի անվանումը**	**Չափի միավորը**	**Համառոտ բնութագիրը**
1.	դյուրակիր համակարգիչներ	հատ	Դյուրակիր համակարգիչ (Notebook) պրոցեսորը Intel Core i3 կամ համարժեքը, էկրանը՝ LED, անկյունագիծը ոչ պակաս 17 դյույմ, օպերատիվ հիշողությունը՝ ոչ պակաս 4GB RAM, հիշողությունը՝ HDD ոչ պակաս 500GB, վիդեոքարտը ոչ պակաս 1GB, վեբ-տեսախցիկ, DVD/±RW, 802.11b/g/n, պայուսակ
2.	տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 28 էջ/րոպե արագության	հատ	Քանոն ՄՖ-3010 կամ համարժեքը: Լազերային, տպման արագությունը՝ ոչ պակաս 18 էջ/րոպե, ոչ պակաս 1200x600 dpi, հիշողությունը ոչ պակաս 64mb, թղթի ձևաչափը՝ A4:
3.	սեղանի համակարգիչներ	հատ	Պրոցեսորը՝ Intel Pentium G2020 2,9GHz Soccet 1155 կամ համարժեքը, մայրական սալիկը՝ 2 PCI բնիկով, RAID 1, օպերատիվ հիշողությունը՝ RAM 4GB, DDR3 Kingston HiperX կամ համարժեքը, հիշողությունը՝ HDD 500GB SATA3 64MB, DVD-RW, սնուցման բլոկը ոչ պակաս 600W, ստեղնաշար, մկնիկ
4.	սեղանի համակարգիչներ	հատ	Պրոցեսորը՝ Intel Core I5-4430 կամ համարժեքը, մայրական սալիկը Gigabyte GA-H87-HD3 կամ համարժեքը, օպերատիվ հիշողությունը Kingston կամ համարժեքը DDR3 ոչ պակաս 8Gb, հիշողությունը՝ HDD 1TB, վիդեոքարտը՝ Nvidea GeForce GT 220 կամ համարժեքը ոչ պակաս 128bit 1GB, սնուցման բլոկը՝ ոչ պակաս 600W, ստեղնաշար, մկնիկ
5.	անխափան սնուցման աղբյուրներ	հատ	Ոչ պակաս 600 ՎգԱ հզորությամբ, միաֆազ
6.	գունավոր տեսամոնիտորներ	հատ	Անկյունագիծը ոչ պակաս 18.5 դյույմ, կետերի քանակը՝ մինչև 1366x769, ֆորմատը՝ 16:9, կոնտրաստը՝ ոչ պակաս 10000 :1, հատիկավորությունը՝ 0.25-0.30մմ, արձագանքման ժամանակը մինչև 5 մվ, վիդեո մուտք՝ VGA:
7.	տեսավահանակ, հեղուկ բյուրեղային LCD, 22"	հատ	Կետերի քանակը՝ մինչև 1920x1080, ֆորմատը՝ 16:9, պայծառությունը (քդ/մ2)՝ 300, Կոնտրաստը՝ 10000:1, հատիկավորությունը (մմ)՝ 0.25-0.30մմ, արձագանքման ժամանակը մինչև 5 մվ, վիդեո մուտք՝ VGA, HDMI:
8.	լազերային տպիչներ	հատ	Քանոն LBP-6020 կամ համարժեքը: Լազերային, տպման արագությունը՝ ոչ պակաս 18 էջ/րոպե, ոչ պակաս 1200x600 dpi, հիշողությունը ոչ պակաս 8mb, թղթի ձևաչափը՝ A4:

* Մատակարարման վայրը՝ 0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ շենք

Հավելված № 2
«_____» «_____» 2014թ. կնքված
№ ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ բնապահպանության նախարարություն

ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900013007019
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Է.Փիրումյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
_____

_____
_____
ՀՀ _____
ՀՎՀՀ _____
_____
_____
_____

(ստորագրություն)
Կ.Տ.

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

h/h	Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը	Չափման միավորը	Միավորի նախահաշվային գինը	**Նախատեսվում է գնել 2014 թվականին**		**Ընդամենը**	
				քանակը	գինը	քանակը	գինը
1	դյուրակիր համակարգիչներ	հատ		1		1	
2	տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 28 էջ/րոպե արագության	հատ		5		5	
3	սեղանի համակարգիչներ	հատ		60		60	
4	սեղանի համակարգիչներ	հատ		1		1	
5	անխափան սնուցման աղբյուրներ	հատ		61		61	
6	գունավոր տեսամոնիտորներ	հատ		60		60	
7	տեսավահանակ, հեղուկ բյուրեղային LCD, 22"	հատ		1		1	
8	լազերային տպիչներ	հատ		15		15	
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը						

Հավելված № 3
«_____» «_____» 2014թ. կնքված
№ ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16) պայմանագրի

ԳՆՈՐԴ	***ՎԱՃԱՌՈՂ***
ՀՀ բնապահպանության նախարարություն	_____
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք	_____
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	_____
ՀՀ 900013007019	ՀՀ _____
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ _____

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____ » 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ ***Ապրանքի գնման պայմանագիր***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ***«_____» «_____» 2014թ.***

Պայմանագրի համարը՝ № ***ՇՀԱՊՁԲ-11/8 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-14/16)***

Գնորդը՝ ի դեմս ***ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տնտեսական բաժնի պետ Հ.Ղազարյանի,*** *և Մատակարարը՝ ի* ***դեմս «----------» ----------ի,*** *հիմք ընդունելով, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը «___» «_____» 2014թ.-ից «___» « _____» 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները.

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

ԸՆԴՈՒՆԵՑ	**ՀԱՆՁՆԵՑ**
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն _____	ազգանուն _____
Կ. Տ.	Կ. Տ.